"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N 671 – Լ

«24» հունիսի2022թ.

ք.Երևան

ՀՐԱՄԱՆ

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ (ՊԱՀԱԿԱՅԻՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ Թատրոն) 25-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պահնորդական (պահակային) ծառայության կանոնակարգը, համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Թատրոնի պահնորդական ծառայությունը ենթարկվում է տնօրենի առաջին տեղակալին:

3. Հանձնարարել Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետին սույն հրամանի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Թատրոնի աշխատողներին, ինչպես նաև այն հրապարակել Թատրոնի ինտերնետային կայքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի ինտերնետային կայքում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Կարեն Դուրգարյան

ք.Երևան
«24» հունիսի, 2022թ.

Հավելված

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և
բալետի ազգային ակադեմիական
թատրոն» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի
հունիսի 24 ,2022թ., N 671-Լ հրամանի
_____Կ.Դուրգարյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Ա. ՍՊԵՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ (ՊԱՀԱԿԱՅԻՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Թատրոնի պահնորդական ծառայության խնդիրները, պահնորդների իրավունքներն ու պարտականությունները, պահնորդական ծառայության իրականացման կարգն, ինչպես նաև պահնորդական ծառայության ընթացքում առաջացած այլ իրավահարաբերություններ:
2. Պահնորդական ծառայության խնդիրներն են՝
   ա. Թատրոնի գույքի ու օրինական շահերի պաշտպանությունը.
   բ. Թատրոնում անցագրային կանոնների պահանջների ապահովումը.
   գ. իր լիազորությունների շրջանակներում Թատրոնի աշխատակիցների, հանդիսատեսի ու այցելուների կողմից Թատրոնում հասարակական կարգի, հանդիսատեսի վարվելակարգերի պահանջների կատարման ապահովում:
3. Թատրոնի պահնորդական ծառայությունը կազմված է պահնորդական ծառայության պետից (ղեկավարից) ու պահնորդներից:

4. Պահնորդը Թատրոնում իր ծառայություններն իրականացնում է ՀՀ աշխատանքային օրենսդրության և Թատրոնի ներքին և անհատական իրավական ակտերին, ինչպես նաև Թատրոնի կողմից կնքված պայմանագրերին համապատասխան:

5. Պահնորդական ծառայության ղեկավարը՝

ա. ղեկավարում ու կազմակերպում է պահնորդական ծառայությունը.

բ. հսկում է, որ պահնորդների կողմից պահպանվեն սույն կանոնակարգի, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջները.

գ. հանձնարարություններ է տալիս պահնորդներին, ինչպես նաև սահմանում է նրանց աշխատանքային գրաֆիկը.

դ. իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Թատրոնի ներքին կամ անհատական իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

6. Պահնորդը՝

ա. ապահովում է Թատրոնում անցագրային կանոնների պահանջների պահպանումը.

բ. ապահովում է, որ հանդիսատեսի, Թատրոնի աշխատակիցների և այլ անձանց կողմից Թատրոնի տարածք չբերվի օրենքով, իրավական այլ ակտերով, Թատրոնի ներքին իրավական ակտերով անգելված, ինչպես նաև այնպիսի գույք որը կարող է վնաս պատճառել անձանց կյանքին կամ առողջությանը կամ գույքին, ինչպես նաև Թատրոնի գույքին.

գ. ստուգում է գույքի Թատրոնի տարածք ներս բերման կամ Թատրոնի տարածքից դուրս բերման օրինականությունը.

դ. Թատրոնի տարածք արգելված իրեր կամ այլ գույք ներս բերումը կանխելու նպատակով իրավունք ունի ստուգել, զննել Թատրոնի տարածք ներս բերվող գուքը.

ե. Թատրոնի տարածքից Թատրոնի կամ այլ անձանց իրեր կամ այլ գույք ապօրինի դուրս բերումը կանխելու նպատակով իրավունք ունի ստուգել, զննել Թատրոնի տարածքից դուրս բերվող գուքը.

զ. արգելում է Թատրոնի տարածք այն անձանց մուտքը, որոնք չունեն համապատասխան անցագրեր կամ թույլտվություններ կամ տոմսեր կամ հրավիրատոմսեր կամ ովքեր թույլ չեն տալիս ստուգել ներս բերվող գույքը կամ ցանկանում են ներս բերել արգելված գույք, ինչպես նաև անգործունակ, ոչ սթափ, օրենսդրության պահանջները խախտած, թմրամիջոցներ օգտագործած կամ կարանտինի կանոնները խախտած անձանց.

է. կարգավորում է Թատրոնի բակում Թատրոնի տրանսպորտային միջոցների կայանումը, ինչպես նաև ապահովում է, որ այլ տրանսպորտային միջոցների կամ այլ անձանց կողմից չարգելափակվի Թատրոնի բակի մուտքն ու ելքը.

ը. իրականացնում է Թատրոնի արտաքին տարածքի, Թատրոնի շենքի արտաքին պատերի ու պատուհանների պաշտպանությունը զանազան ոտնձգություններից, վանդալիզմից.

թ. կազմակերպում է հրդեհի կամ այլ արտակարգ իրավիճակներում հանդիստեսի կամ այլ անձանց կազմակերպված տարահանումը Թատրոնի տարածքից.

ժ. իրականացնում է Թատրոնի տարածքում ահաբեկչական կամ հակահիրավական գործողությունների կանխարգելման միջոցառումներ.

ժա. իր լիազորությունների շրջանակում ապահովում է, որ Թատրոնի աշխատակիցների, այցելուների կամ հանդիսատեսի կողմից չխախտվեն ՀՀ օրենսդրության, Թատրոնի ներքին իրավական ակտերի պահանջները, հասարակական կարգն ու համակեցության կանոնները.

ժբ. Թատրոնի տարածքից դուրս է բերում Թատրոնի տարածք ապօրինի մուտք գործած կամ Թատրոնի տարածքում իրավախախտում կատարած կամ Թատրոնի ներքին իրավական ակտերի պահանջները խախտած անձանց՝ օրենքով կամ սույն կանոնակարգով սահմանված դեպքերում կիրառով ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ.

ժգ. վնասազերծում է Թատրոնի հանդիսատեսի, աշխատակիցների կամ Թատրոնի տարածքում գտնվող այլ անձանց, Թատրոնի գույքի, ինչպես նաև իր նկատմամբ ոտնձգություն կատարած անձին և վերջինիս հանձնում է իրավապահ մարմիններին.

ժդ. պահում է իրավախախտում կատարած անձանց և նրանց հանձնում իրավապահ մարմիններին

ժե. պահպանում է իր գործունեության ընթացքում իրեն հայտնի դարձած Թատրոնի առևտրային կամ այլ գաղտնիք հանդիսացող կամ անձանց անհատական տվյալների գաղտնիությունը.

ժզ. աշխատանքներ է իրականացնում արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ուղղությամբ.

ժէ. կնքված հատուկ արկղում պահպանում է Թատրոնի բոլոր շինությունների ու աշխատասենյակների բանալիները, որոնցից օգտվել կարելի է միայն արտակարգ

իրավիճակներում և միայն Թատրոնի ղեկավարության կամ պահնորդական ծառայության ղեկավարի թույլտվությամբ.

ժը. ապահովում է տեսնակարահանող սարքերի պատշաճ աշխատանքը: Դրանց հետ խնդիրներ առաջանալու դեպքում այդ մասին անմիջապես զեկուցում է ծառայության պետին.

ժթ. վերահսկում է իր պահպանությանը հանձնված առանձին աշխատասենյակների կամ այլ տարածքների ահազանգման համակարգերի աշխատանքը.

ի. ապահովում է, որ Թատրոնի տարածքում, ինչպես նաև ներկայացումների ընթացքում չիրականացվեն ապօրինի տեսանկարահանումներ, լուսանկարահանումներ կամ ձայնագրություններ.

իա. Թատրոնի տնօրենի կողմից սահմանված սխեմաներով, գրաֆիկով ու կարգով իրականացնում է Թատրոնի տարածքի շրջայցեր.

իբ. իր պարտականություններն իրականացնում է շուջօրյա.

իգ. պետք է ունենա պատշաճ արտաքին տեսք.

իդ. հսկողություն է իրականացնում, որ Թատրոնի հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն Թատրոնի ծառայություններից օգտվող (դահլիճը կամ այլ տարածքը վարձակալած կամ նկարահանումներ կատարող կամ այլ աշխատանքներ կատարող) իրավաբանական անձանց ներկայացուցիչները կամ ֆիզիկական անձինք Թատրոն բերեն միայն իրենց կողմից ներկայացված ցանկում նշված և Թատրոն ներս բերելու համար չարգելված գույք, ինչպես նաև Թատրոնից դուրս չբերեն այլ գույք.

իե. իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով, Թատրոնի ներքին ու անհատական իրավական ակտերով նախատեսված այլ պահնորդական գործառույթներ:

7. Պահնորդն ու ծառայության ղեկավարը պետք է իմանա՝

ա. սույն կանոնակարգը.

բ. Թատրոնի ներքին կարգապահական կանոնները, մուտքի և ելքի կարգերը, պահնորդական լիազորություններին առնչվող այլ ներքին իրավական ակտերը.

գ. իր գործունեության համար նախատեսված սարքերից, սարքավորումներից օգտվելու կարգը.

դ. այն անձանց պաշտոններն ու ստորագրությունները, որոնք իրավունք ունեն տրամադրել անցագրեր կամ որոնք իրավունք ունեն թույլատրել Թատրոնի տարածք ներս բերել գույք կամ Թատրոնի տարածքից դուրս բերել Թատրոնի գույքը.

ե. ուժ կամ հատուկ միջոցներ կիրառելու դեպքերն ու կարգը.

զ. հրդեհային անվտանգության սարքերից օգտվելու կարգը.

է. այն անձանց հեռախոսների համարները, որոնց նա պարտավոր է իրազեկել սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում.

ը. Թատրոնի բոլոր մուտքերը, ելքերը, առանձնապես պահպանության ենթակա տարածքները, շրջացի երթուղիները, Թատրոնի տարածքի առանձնահատկությունները, աստիճանավանդակների ու վերելակների տեղերը.

թ. առաջին օգնություն ցուցաբերելու ընդհանուր սկզբունքները:

8. Պահնորդական գործունեություն իրականացնելիս արգելվում է՝

ա. Թատրոնի կամ իր անմիջական ղեկավարներց թաքցնել տեղի ունեցած կամ նախապատրաստվող իրավախատումների, հանցագործությունների, արտակարգ դեպքերի, ծառայության ընթացքում ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ իրեն հայտնի դարձած ցանկացած տեղեկատվություն.

բ. այլ անձանց մուտքը պահնորդների աշխատասենյակ կամ այն տարածք, որտեղ գտնվում են տեսաձայնագրող սարքերը.

գ. այլ անձանց մուտքը կամ գտնվելը հսկիչ-անձագրային կետի աշխատակցի սենյակ կամ այլ անձանց կողմից հսկիչ-անձագրային գործունեություն իրականացնելը.

դ. անհարգել պատճառով և առանց փոխարինման լքել իր աշխատատեղը.

ե. իրեն ամրացված հատուկ միջոցները կամ ռադիոկապի կամ այլ սարքերը այլ անձանց հանձնելը.

զ. թույլ տալ, որ Թատրոնի տարածք մուտք գործեն համապատասխան իրավունք չունեցող անձինք.

է. ծառայությունն իրականացման ժամանակ ծխել, օգտագործել ոգելից խմիչքներ, դիտել հեռուստացույց կամ օգտվել համացանցի ցանկացած ծառայություններց կամ ոչ նպատակային խոսել հեռախոսով կամ սնվել կամ խաղալ տարբեր խաղեր, այդ թվում վիրտուալ կամ ինտերնետային կամ քնել կամ պարկել կամ զբաղվել ընթերցանությամբ կամ

կատարել ցանկացած այլ գործողություն, որը չի բխում ծառայության պահանջներից կամ չի նախատեսված սույն կանոնակարգով: Ծխելու կամ սնվելու կամ հանգստանալու համար պահնորդին տրվում են համապատասխան ընդմիջումներ.

ը. կատարել անձանց պատիվը կամ համբավը կամ անձեռնամխելությունը կամ օրինական շահերը կամ իրավունքները խախտող ցանկացած ապօրինի գործողություն.

թ. կատարել անձանց կյանքին կամ առողջությանը կամ նրանց կամ Թատրոնի գույքին վտանգ սպառնող գործողություններ.

ժ. այլ անձանցից Թատրոնի աշխատակիցներին կամ այլ անձանց փոխանցելու համար ընդունել ցանկացած գույք՝ բացառությամբ պաշտոնական փաստաթղթերի կամ փոստի.

ժա. Անձամբ իրականացնել տեսա-լուսանկարահանումներ, ձայնագրություններ:

9. Թատրոնի տեսաձայնագրող սարքերը պետք է լինին մշտապես միացված վիճակում: Տեսաձայնագրող սարքը պետք է լինի կնքված, կողպված ու կոդավորված: Տեսաձայանգրող սարքի բանալին, ինչպես նաև կոդը պահպանվում է տնօրենի առաջին տեղակալի մոտ: Տեսաձայնագրող սարքերի կողմից տեսաձայնագրությունները դիտելու իրավունք ունեն տնօրենը, նրա տեղակալները, պահնորդական ծառայության պետը: Տեսաձայնագրող սարքից տեսաձայնագրությունները կարող են այլ անձանց կողմից պատճենահանվել կամ սարքը կարող է առգրավվել միայն դատարանի կամ իրավապահ մարմինների կողմից և միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով: Թատրոնի տնօրենի գրավոր որոշմամբ տեսաձայնագրող սարքից պատճենահանումը կամ դիտումը կարող է իրականացվել միայն հանցագործությունների կամ իրավախախտումների կամ կարգապահական կանոնների խախտումների կանխման, կանխարգելման կամ հայտնաբերման նպատակով:

10. Թատրոնի տեսաձայնագրող սարքի տեսաձայնագրությունները պահպանվում են ոչ պակաս քան երեք ամիս: Թատրոնի տեսաձայնագրող սարքի տեսաձայնագրությունները ոչնչացվում են ինքնաբերաբար նշված սարքերի կողմից:

11. Իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ատարելու համար պահնորդական ծառայության ղեկավարը և պահնորդները կարող են ենթարկվել

կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև օրենքով նախատեսված քրեական կամ վարչական պատասխանատվության:

12. Իրենց լիազորությունների իրականացման համար պահնորդին կարող են հատկացվել՝

ա. մետաղորսիչներ.

բ. ներքին ռադիոկապի միջոցներ.

գ. արցունքաբեր գազերով միջոցներ կամ ատրճանակներ.

դ. ձեռնաշղթաներ.

ե. օրենքով չարգելված այլ միջոցներ:

13. Իր պարտականությունները կատարելիս պահնորդը ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ գործադրելու իրավունք ունի միայն անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում, ինչպես նաև ոտնձգություն կատարած անձին վնասազերծելիս՝ օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում ու կարգով:

14. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների գործադրման ընտրությունը կատարելիս պահնորդը առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից և ոտնձգության բնույթից՝ ղեկավարվելով Թատրոնի գույքի կամ անձանց պաշտպանությունը առավել հուսալի և անվտանգ եղանակով իրականացնելու անհրաժեշտությամբ:

15. Պահնորդը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով իր օրինական պահանջները կատարելու և ոտնձգությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում պահպանվող անձի կամ իր կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

16. Պահնորդը պարտավոր է նաև՝

ա. ելնելով ոտնձգության բնույթից՝ ձգտել, որ ոտնձգություն կատարած անձին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.

բ. անհապաղ ապահովել (ցուցաբերել) առաջին բուժօգնություն այն անձանց, որոնց առողջությանը պատճառվել է վնաս.

գ. ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների գործադրմամբ անձին պատճառած մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում անհապաղ տեղեկացնել իր ղեկավարին:

17. Օրենքով չնախատեսված դեպքերում կամ սահմանների անցումով պահնորդի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների գործադրումը առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

18. Պահնորդը իրավունք ունի ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ) գործադրելու պաշտպանության ենթակա անձի կամ օբյեկտի նկատմամբ ոտնձգությունը կանխելիս, դրանք կատարած անձանց վնասազերծելիս, ինքնապաշտպանության, ինչպես նաև այն դեպքերում, երբ առանց ֆիզիկական ուժ գործադրելու հնարավոր չէ ապահովել իր պարտականությունների օրինական և իրավաչափ կատարումը:

19. Պահնորդը հատուկ միջոցներ կարող է գործադրել հետևյալ դեպքերում.

ա. իր կամ անձանց կյանքին կամ առողջությանն անմիջականորեն սպառնացող հարձակումը խափանելիս.

բ. իր կամ անձանց կամ պահպանվող գույքի դեմ ուղղված հարձակումը կանխելիս, երբ հարձակվողը ցույց է տալիս ֆիզիկական դիմադրություն.

գ. Թատրոնի տարածք ապօրինի մուտք գործելու փորձ կատարող անձին կանգնեցնելու անհրաժեշտությունից ելնելով, եթե անձը չի կատարում կանգնելու վերաբերյալ պահնորդի օրինական պահանջը.

դ. պահնորդի հատուկ միջոցներին տիրանալու փորձը կանխելիս:

20. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության նկատելի նշաններ ունեցող կանանց, հաշմանդամների, անչափահասների նկատմամբ, եթե նրանց տարիքն ակնհայտ է կամ հայտնի է պահնորդին, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, պահնորդի կամ այլ անձի կյանքին կամ առողջությանը, Թատրոնի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի:

21. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հատուկ միջոցների բացակայության դեպքում պահնորդը իրավունք ունի օգտագործելու ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցները: